ՑՆՈՐՔՆԵՐ ԵՒ ՄՈՐՄՈՔՆԵՐ

ԼԻՐԻԿԱԿԱ՛Ն ԻՆՏԵՐՄԵՑՑՕ

Նուէր ընկերիս — Դերենիկ Դեմիրճեանին

ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

Դադրած, անքուն խեղճ ճամբորդ եմ,
Բլբուլ եմ, — վարդս ման կու գամ.
Հազար տեղից վիրաւոր եմ,
Գիտէ՞ք թէ ո՞ղջ ման կու գամ։

I

Լուռ գիշերին հեռու տեղից
Մի երգ հասաւ իմ սրտին…
Այն ձեմ սիրտն էր, որ հեզ թախիծ
Ցօղեց, ցայեց իմ հոգին։
Զինջ օրօրով հիւսուած երազ
Ծորեց, բուրեց վեհ երգը…
Ո՞ւր է սիրտը—անյա՛յտ, անհա՛ս,
Սուրբ սէր ծփաց իմ սիրտը…

II

Վարդը—սրտին, ծիտը—ճըտին
Գարունն եկաւ, ջա՛ն գարուն.

Ցայել=ջրին տալ, մաքրել. աչել=նայել.

Տուղտը—ծծին, աստղը—ճակտին,
Գարունն եկաւ, ջա՜ն գարուն։
Արտոյտն անո՜ւշ սէր կ՚երգէ,
Սիրտս լուռ է, քանց ձմեռ.
Էս ի՞նչ կարմիր, վառ արև է,
Սիրտս մութն է, քանց գիշեր․․,

III

Մռայլ բանդիս նեղ լուսանցքից
Աստղեր տեսայ երկնքում,
Որ սգաւոր աչերի պէս
Լուռ կ՚աշէին իմ սրտում։
Մայրս, քոյրս միտս ընկան,
Որ պատերիս սուրբ հողում
Ինձի կ՚յիշեն ու կը սգան
Աստղերի պէս—լո՜ւռ, տրտո՜ւմ։

IV

Գիտեմ, խաչդ ծա՜նր է, հսկա՜յ,
Ով մա՜րդ,—եղբա՜յր,—ընկե՛ր իմ,
Քեզ մօ՛տ, քեզ մօ՛տ կուգամ ահա՜
Կրծքիս սեղմեմ, արտասուիմ։
Հիմի ձեռքդ տուր ինձ, ընկե՛ր,
Վշտով անցրինք մեր կեանքը,
Ժամն է հասել—դիմենք յառա՜ջ,
Խարխուլ դարձաւ մեր խաչը․․․

V

Վառ արևի շողքը խաղաց
Լուսադէմին իմ ճակտին.
Աշունիկն էլ թռաւ, եկաւ,
Նստաւ բանդիս լուսանցքին։
Ա՛խ, շա՜տ սրտանց կարօտցեր եմ
Աշունիկիս, արևիս.

Ե՞րբ պիտի՝ ոտքերն ընկնիմ, գրկեմ
Աղունիկիս, արևիս։

VI

—Մէրիկ, էդ ինչ ալ-կրակ է,
—«Բալաս, վէրքիդ դեղ կ'ելնեմ...»
—Ա՛խ, մէրիկ ջան, վէրքը—սիրտս է,
Դեղ ու դարմանդ ինչ անեմ.
—Մէրիկ, վէրքս նորն ու, խորն է,
Լաւի դարձի յոյս չ'կայ.
Մի քրքրիր սիրտս—զուր է,
Խոր-խոցերուս ճար չ'կայ...

VII

Սրտիս վրայ մի վարդ-ամպ կայ,
Նրա այն նուրբ շուքի տակ
Քնքուշ սիրտս մեղմ կը հեւայ,—
Սիրտս ամպով գոց ու փակ։
Վարդ—ամպի մէջ շատ արցունք կայ,
Այն սրտումն է միշտ ծորում.
Ու իմ սիրտը լուռ կ'ծփայ
Նրա անուշ ցօղերում...

VIII

Քեզ չ'տեսնել—ուխտել էի,
Բայց, ա՛խ, էլի հանդիպայ.
Քա՛ջրիկ, վէրքս լաւ է հիմի,
Մի սև սպի տեղը կայ։
Էն սև սպին մութ ամպի պէս
Սև ցուց դէմքը արևի.
Ու մեն կուգամ սև-շուքի պէս
Սարեր-ձորեր ամայի...

IX

Լռիկ աստղերն հեզ հայեացքով

Անապատին են նայում.
Եւ անապատն մեղմ թախիծով
Հոգուս մէջն է ծաւալւում.
Ես խորհում եմ լռութեան մէջ—
Խորհրդաւոր ու անձայն.
Եւ այն աստղերն վէրքերի պէս
Հոգուս խորքում կը տըրպան...

X

Գուման դառաւ ծովը բոլոր,
Երկնուց բռնած մուժն առաւ.
—Ի՞նչ ման կու գամ միտքս մոլոր,
Սիրտս խոլոր, խոժոռ ցաւ։
Ծո՛վ, քեզի տամ հիւանդ սիրտս,
Կո՞ւզես լացու, թէ խեղդէ.
Մէնակ խաբար տուր խեղճ մօրս,
Անգութ եարիս չ'անիծէ...

XI

Լուսինն, ինչպէս քնատ կարապ
Ծով-երկնքում կ'լողայ.
Լուսնու բակը, ինչպէս փրփուր
Շատ թոյլ, թալուկ կ'շողայ։
Լուռ է շուրջս—ձայն-ձուկ չ'կայ,
Միայն սիրտս է զօղանջող
Միայն սիրտս է որ ինձ կ'զգայ.
Բայց և հասկնալ չէ կարող...

XII

Ա՛խ, ես կուզեմ սիրտս թաղեմ
Ծովի մռայլ, մութ խորքում.
Քեզնից՝ հեռու վիշտս պահեմ—
Գաղտնի տեղում, շատ թաքուն։
Թող միայն ծովը վիշտս իմանայ.

Օ՛, նա շատ մեծ սիրտ ունի.
Սրտանց կուլայ սիրուս վրայ,
Հոգու խորքից կ՚յուզուի...

XIII

Մատաղ կեանքիս վաղուց մոռցած
Երգը հասաւ իմ սրտին.
Յուզուեց, լցուեց սիրտս հանգած,
Սիրտս—մամռոտ, լուռ շիրիմ։
Եւ ուզեցայ ծովափին ելնիմ,
Հեռու, հեռու մարդկանցից.
Մէնակ ընկնիմ վայրի ափին,
Որ լամ կսկուծ ու կսկիծ...

XIV

Հազար ու մէկ ցաւ եմ քաշեր,
Քաշը ծանըր էր աշխարհից.
Իմ տեղըս որ քար-սար լինէր,
Կը ճեղքուէր մէջ տեղից։
Հազար ու մէկ էն ցաւերից
Մէկ ցաւ մնաց սրտիս մէջ.—
Ա՛խ, էն սիրուն։ սեւ-աչերից
Զուլում ցաւն է սրտիս մէջ...

XV

Ա՛խ, ընկեր իմ, ի՞նչ ես պտրում
Իմ ցաւագար, խեղճ սրտում.
—Սիրոյ զարմըն, ոսկի անուրջ,
Թէ՞ ճոխ երգեր, ծաղկանց փունջ։
Է՛յ, հանգիստ թող հիւանդ սիրտս,
Ուր որ միայն պիտ՚ գտնիս
Ցնդած ցնորքս ու մորմոքս,
Ու սառն աճիւնն յոյսերիս...